ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«Օրգանական գյուղատնտեսության զարգացումը Հայաստանի հյուսիսային համայնքներում որպես աղքատության նվազեցման եվ կենսաբազմազանության պահպանության խթան» ծրագրի (OFDNA) շրջանակներում

Ընդհանուր դրույթներ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել մրցույթ օրգանական սերտիֆիկացման դրամաշնորհների համար (նախնական (մինչև 40 ֆերմեր կամ այլ արտադրող))՝հյուսիսային Հայաստանի 3 մարզերից՝ Գեղարքունիք, Լոռի և Տավուշ: Այդ նպատակով, որպես ծրագրի շահառու ընտրվել են մարզերի 32 գյուղեր: Շահառու գյուղերի ցանկը կցվում է (տես.՝ հավելված 1):

Ծրագրի նպատակներին հասնելու համար, մասնավորապես, կայուն զարգացման և շրջակա միջավայրի պահպանության խթանման համար, նախատեսվում է մշակել ավելի արդյունավետ տնտեսական զարգացման սխեմաներ գյուղական բնակավայրերում: Ակնհայտ է, որ գյուղատնտեսական գործունեությունը և հետբերքահավաքայն գործողությունները, ինչպիսիք են վերամշակումը, առևտուրը, պահեստային ենթակառուցվածքը, չափազանց սակավ են Հայաստանում և հիմնականում մրցունակ չեն ոչ ազգային, ոչ էլ միջազգային շուկաներում:

Անցումը օրգանական արտադրությանը և օրգանական սերտիֆիկացման գործընթացի սկիզբը նոր շուկաներ մուտք գործելու, տնտեսական իրավիճակի բարելավման որոշ նախադրյալներ են, որոնք ուղեկցվում են կենսաբազմազանության, բնական պաշարների պաշտպանությամբ, հողի բերրիության բարձրացմամբ և այլն:

Օրգանական արտադրության, օրգանական սերտիֆիկացման, շահագրգիռ ֆերմերների, վերամշակողների, արտադրողների ներուժը կբացահայտվի ինչպես ծրագրի առաջին ամիսների հետազոտական փուլում, այնպես էլ ծրագրի շրջանակներում սեմինարների և հանդիպումների ընթացքում:

Օրգանական գյուղատնտեսության սերտիֆիկացման աջակցության մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահաջներ

<u>Ծրագրին կարող են դիմել</u>

- ✓ Ծրագրի 32 գյուղերից գյուղատնտեսական արտադրանքի արտադրողներ կամ հետբերքահավաքյան մշակման բոլոր ոլորտների ներկայացուցիչները:
- ✓ Գյուղատնտեսական արտադրանքի կոոպերատիվներ և առևտրի գործակալներ 3 մարզերից և ծրագրի գյուղերից, որոնք ցուցադրում են օրգանական արտադրանքի շուկաների հետագա խթանման իրենց ծրագրերը:
- ✓ Դիմորդները, ովքեր ի վիճակի են դրսևորել օրգանական շուկայում գործունեությունը սկսելու կամ շարունակելու կամ ընդլայնելու իրենց մոտիվացիան:
- ✓ Անձինք, ովքեր չեն ստանում այլ աջակցություն օրգանական սերտիֆիկացման համար:
- ✓ Այն անձինք, ովքեր որպես պայման այլ նախագծերում տեխնիկական աջակցություն ստանալու համար՝ պարտավորություն չունեն վճարել օրգանական սերտիֆիկացման դիմաց: Նման պարտավորությունները պետք է իրականացվեն սեփական ներդրման հիմունքով և ուստի նման պարտավորություններ ունեցող անձինք չեն կարող դիմել այս մրցույթին մասնակցելու համար:
- ✓ Կոոպերատիվներ կամ խմբեր, որոնց գործունեության հիմքում ընկած է «արժեշղթայի» սկզբունքը, և որոնք ձևավորվում են ծրագրի շրջանակներում:

- ✓ Այն անձինք, ովքեր ի վիճակի են ցույց տալ իրենց պլանների երկարատև բնույթը օրգանական շուկայում:
- ✓ Արդյունաբերության ուղղություններ, որոնք չեն վարում օրգանական սկզբունքներին հակասող գործունեություն (օրինակ՝ ԳՓՕ-ներ, աղտոտման աղբյուրների հարևանությամբ գտնվող տարածքներ, աղտոտվածություն և արտանետումներ գեներացնող արդյունաբերություններ):
- ✓ Արադրողներ, որոնց գործունեություն հիմնված է փակ ցիկլի վրա՝ մշակաբույսեր-գյուղկենդանիներ:
- ✓ Տնտեսվարողներ, որոնք ցուցաբերում են սերտիֆիկացման ծախսերի տարբերությունը ինքնաֆինանսավորելու պատրաստակամություն:
- ✓ Եթե դրամաշնորհի մրցույթի համար դիմորդները արդեն իսկ սերտիֆիկացված արտադրողներ կլինեն, նրանք պետք է տեղեկատվություն տրամադրեն այն մասին, որ այդ գումարը հայցվում է ծրագրի ընդլայնմանն ուղղված գործունեության համար, նոր գործունեության կամ ոլորտի համար, նոր սերտիֆիկացման տարածքների, հումքի նոր մատակարարների և այլն: Դրամաշնորհի դիմորդը չի կարող այն ստանալ գործունեության այն մասի համար, որի համար նա նախկինում ստացել է սերտիֆիկացում:

Գնահատման չափանիշներ

	ՉԱՓԱՆԻՇ
1	Մոտիվացիա/շարժառիթ
2	Երկարաժամկետություն
3	Տնտեսական ցուցանիշներ (տեխնոլոգիա, ռեսուրսների առկայություն, ենթակառուցվածքներ, մարդկային ռեսուրսներ, ֆինանսավորում, հող, ոռոգում, սերմեր)
4	Կայունություն (բնական ռեսուրսների պահպանություն և բարելավում)
5	Կայունություն (հողի բերրիության բարձրացում)
6	Ներկայացվող ծրագրի կայունություն (տնտեսական)
7	Կայունություն (տնտեսական) շուկաների և արժեշղթայի առկայություն

8	Ծրագրի իրականացման արդյունքում սոցիալական կայունություն (միգրացիա, կրկնօրինակման /մուլտիպլիկացիոն էֆեկտ/ազդեցություն, գյուղական խմբերի ներկայացուցչականություն, օրինակ՝ երիտասարդներ, կանայք, այլ)
9	Սոցիալական կայունություն (եթե խոսքը գնում է ծառայությունների մասին, ապա շահառուների թիվը, որոնք ներառվելու են տվյալ գործունեության հետեևանքով)
10	Սոցիալտնտեսական (դիվերսիֆիկացում և այլ անձանց, խմբերի, գյուղերի, այլ ներառում)
11	Փակ ցիկլեր
12	Սերտիֆիկացման արժեքի տարբերությունը վճարելու պատրաստակամություն և մոտիվացիա (առկայության դեպքում)
13	Ապագայում օրգանակն սերտիֆիկացման իրականացման պատրաստակամություն անձնական ներդրումներով
14	Այլ չափանիշներ/հիմնավորումներ (նշել վերաբերվողը)

Մրցույթին դիմելու կարգը

✓ Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

<u>Հայտն առցանց լրացնելու հնարավորության դեպքում՝</u>

- առցանց լրացնել դիմում հայտը, որը տեղադրված է www.nabu.am կայքում
- ներբեռնել (upload) անհրաժեշտ փաստաթղթերը

<u>Հայտն առցանց լրացնելու հնարավորության բացակայության դեպքում՝</u>

- թղթային տարբերակով ներբեռնել հայտի PDF տարբերակը և լրացնել այն
- թղթային տարբերակով ձեռք բերել դիմում հայտը Ձեր տեղական ինքնակառավարման մարմնից՝ գյուղապետարան/համայնքապետարան և լրացնել այն
- ուղարկել organiccontest@nabu.am էլեկտրոնային փոստին՝ սկանավորելով և կցելով անհրաժեշտ փաստաթղթերը

<u>Հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ուղարկելու հնարավորության բացակայության դեպքում՝</u>

- ուղարկել Իսահակյան 18, սեն. 3, 0025 Երևան հասցեով՝ կցելով անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները

- դիմում հայտը, անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների հետ թողնել տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում՝ գյուղապետարանում/համայնքապետարանում

Հարցերի և առաջարկների դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով - (+374)55575528:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետյալ փաստաթղթերը

- ✓ Մրցույթի դիմում հայտը:
- ✓ Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
- ✓ Հողամասի կամ գործունեության տարածքի սեփականության կամ վարձակալության փաստաթղթերի պատճենները:
- ✓ Ենթակառուցվածքի համար սեփականության կամ վարձակալության փաստաթղթերի պատճենները (եթե ունեք առկա ենթակառուցվածքներ):
- ✓ Գրանցված կազմակերպության/կոոպերատիվի պետական գրանցման վկայականի պատճենը (եթե ունեք գրանցված կազմակերպություն, կոոպերատիվ և այլն):
- ✓ Օրգանական սերտիֆիկացման հայտի հիման վրա տրված սերտիֆիկացման տարեկան գնի չափը ներկայացնող փաստաթուղթ: Տվյալ փաստաթուղթը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Հայաստանի հանրապետությունում գյուղատնտեսության օրգանական սերտիֆիկացում իրականացնող մարմնին (+374)95221295 հեռախոսահամարով կամ գրել info@ecoglobe.am էլեկտրոնային փոստին:
- ✓ Նախկինում սերտիֆիկացված տնտեսվարողները պետք է ներկայացնեն հայտ նոր գործողություններ իրականացնելու կամ գործունեության տարածքները ընդլայնելու համար նախատեսված հայտ: Նախկինում իրականացված գործունեության և տարածքների համար ֆինանսավորում չի տրամադրվելու: Գնառաջարկը տրվելու է մեկ տարվա համար:

Հավելված 1



1	Աթան	Լոռի	17	Ծաթեր	Լոռի
2	Բովաձոր	Լոռի	18	Ուրուտ	Լոռի
3	Ձորագյուղ	Լոռի	19	Աղավնավանք	Տավուշ
4	Հագվի	Լոռի	20	Բերքաբեր	Տավուշ
5	Հոբարձի	Լոռի	21	Չինչին	Տավուշ
6	Քարաբերդ	Լոռի	22	Դիտավան	Տավուշ
7	Քարինջ	Լոռի	23	Հովք	Տավուշ
8	Կարմիր Աղեկ	Լոռի	24	Իծաքար	Տավուշ
9	Լեջան	Լոռի	25	Լուսահովիտ	Տավուշ
10	Լոռի Բերդ	Լոռի	26	Նավուր	Տավուշ
11	Լորուտ	Լոռի	27	Տավուշ	Տավուշ
12	Մարց	Լոռի	28	Անտառամեջ	Գեղարքունիք
13	Պրիվոլնոյե	Լոռի	29	Այգուտ	Գեղարքունիք
14	Պուշկինո	Լոռի	30	Դպրաբակ	Գեղարքունիք
15	Շամուտ	Լոռի	31	Կալավան-Բարեպատ	Գեղարքունիք
16	Ծաղկաշատ	Լոռի	32	Ձորավանք	Գեղարքունիք